



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՆԻ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՀՊՏՀ ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի դասախոս,  
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի հայցորդ

## ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐԸ՝ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Աղետների ռիսկերի կառավարման (ԱՌԿ) գաղափարը, որի նպատակը աղետների ռիսկերի նվազեցումն է (ԱՌՆ), իր շուրջն է համախմբել միջազգային հանրությանը:

Տարբեր երկրներում աղետների տնտեսական հետևանքների ծանրությունն ազդակ հանդիսացավ, որպեսզի աղետների ռիսկերի տնտեսական գնահատականն այսուհետ դառնա ԱՌԿ գործընթացների առանցքային ուղղություններից մեկը: Շարժվելով այս ուղղությամբ տնտեսական զարգացման գաղափարը դրվեց ԱՌՆ ռազմավարության հիմքում: Սակայն մտահոգիչն այն է, որ մինչ այժմ շատ ավելի մեծ ֆինանսական միջոցներ են ծախսվում աղետների հետևանքների վերացման, քան այդ աղետների ռիսկերի նվազեցման վրա:

Հայաստանում ևս իրականացվում են աղետների ռիսկերի նվազեցման բազմազործոն, բազմաբնույթ գործընթացներ: Թվում է՝ 21-րդ դարում, երբ առկա է տեղեկատվական հսկայական համակարգ, անհրաժեշտ փոփոխությունների հայթայթման գործընթացում որևէ խնդիր չի կարող առաջանալ: Սակայն ոլորտի ուսումնասիրության շրջանակներում բախվեցինք ՀՀ-ում աղետների, արտակարգ իրավիճակների, դեպքերի տնտեսական հետևանքների վերաբերյալ կանոնակարգված, պաշտոնական փոփոխությունների բացակայության խնդրին: Մի կողմից, երևույթը մտահոգիչ է, մյուս կողմից՝ սույն հետազոտությունը լավ առիթ է բացն արձանագրելու և նոր լուծումներ առաջարկելու համար:

**Հիմնաբառեր.** աղետների ռիսկերի կառավարում, աղետների ռիսկերի նվազեցում, տնտեսական ազդեցություն, վրանգ, խոցելիություն, կարողություններ

JEL: Q54, D81

**Ներածություն:** Աղետների տնտեսական հետևանքներն անմիջականորեն ազդում են երկրի տնտեսական ներուժի և զարգացման վրա: Տնտեսական հետևանքների ծանրությունը պայմանավորված է մի շարք գործոններով. աղետ առաջացնող վտանգի բնութագրեր (ինտենսիվություն, ուժգնություն, մասշտաբ և այլն), առկա խոցելի համակարգերի բնույթ (բնակչություն, տնտեսություն, բուսական, կենդանական աշխարհի և այլն) և համակարգի կարողություններ (ռեսուրսներ, գիտելիք, փորձ, ինստիտուցիոնալ կարողություններ և այլն):

Միավորված ազգերի կազմակերպության Աղետների ռիսկերի նվազեցման գործակալության զեկույցում նշվում է, որ 1998-2017 թթ. աղետներից տնտեսական վնասը կազմել է 2 տրլն 908 մլրդ ԱՄՆ դոլար, որից 2 տրլն 245 միլիարդը կլիմայական աղետներից կորուստներն են<sup>1</sup>:

Հայաստանում մինչ օրս արձանագրված աղետներից առանձնացվում է 1988 թ. Սպիտակի երկրաշարժը, որից ՀՀ ուղղակի տնտեսական վնասը կազմել է 4,2 մլրդ ԱՄՆ դոլար<sup>2</sup>, սակայն որևէ տվյալ առկա չէ նույն աղետի անուղղակի տնտեսական կորուստների վերաբերյալ: Հայաստանում աղետների ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով առաջնային է դառնում աղետների, արտակարգ իրավիճակների և դեպքերի տնտեսական ազդեցության գնահատումը, քանի որ ԱՌԿ գործընթացը ենթադրում է ներդրում, իսկ ներդրումների օպտիմալ չափը, ճիշտ ընտրված ժամանակահատվածը կարելի է հաշվարկել միայն աղետների տնտեսական ազդեցությունների ուսումնասիրության արդյունքում:

**Գրականության ակնարկ:** Աղետների ռիսկերի կառավարման հարցում բեկումնային եղավ ՄԱԿ-ի կողմից Հյուգոյի 2005-2015 թթ. «Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացման գործողությունների ծրագրի»<sup>3</sup> (ՀԳԾ) ընդունումը: Ծրագրի ակնկալվող արդյունքը պետություններում և համայնքներում աղետների պատճառած մարդկային, սոցիալական, տնտեսական և բնապահպանական ակտիվների կորուստների էական նվազեցումն էր:

2015 թ. Ճապոնիայի Սենդայ քաղաքում կայացած ՄԱԿ-ի երրորդ համաշխարհային համաժողովում ընդունվել է «Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թթ. գործողությունների ծրագիրը»<sup>4</sup>, որը Հյուգոյի գործողությունների ծրագրի իրավահաջորդն է: Սենդայի գործողությունների ծրագիրը կառուցված է մի սկզբունքով, որն ապահովում է պետությունների և շահագրգիռ այլ կողմերի՝ ՀԳԾ շրջանակներում կատարած աշխատանքների շարունակականությունը և ներառում է խորհրդակցությունների և բանակցությունների ընթացքում առաջ քաշված մի շարք նորամուծություններ: Փաս-

<sup>1</sup> Տե՛ս UNISDR, Economic losses, poverty and disasters 1998-2017, էջ 3, [https://www.unisdr.org/2016/iddr/IDDR2018\\_Economic%20Losses.pdf](https://www.unisdr.org/2016/iddr/IDDR2018_Economic%20Losses.pdf):

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի «ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարությունը և ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N281-Ն որոշում, հոդված 16, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74651>:

<sup>3</sup> Տե՛ս Hyogo Framework for Action 2005-2015, [https://www.unisdr.org/files/1037\\_hyogoframeworkforactionenglish.pdf](https://www.unisdr.org/files/1037_hyogoframeworkforactionenglish.pdf):

<sup>4</sup> Տե՛ս Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030, [https://www.preventionweb.net/files/43291\\_sendaiframeworkfordrren.pdf](https://www.preventionweb.net/files/43291_sendaiframeworkfordrren.pdf):

տաթղթում առանձնացված են 7 թիրախներ, որոնցից 3-րդի ձևակերպումն այսպիսին է. «Մինչև 2030 թ. նվազեցնել աղետների պատճառած ուղղակի տնտեսական վնասը համաշխարհային համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ»: Այս թիրախը ևս մեկ անգամ կարևորում է ԱՌԿ տնտեսական գնահատումը:

Աղետների տնտեսական ազդեցությունների գնահատման հարցում էական ազդեցություն ունի Ռ. Միչլերի «Զարգացող երկրներում բնական աղետների ռիսկի կառավարման ծախս-օգուտ վերլուծություն» աշխատությունը (CBA: Cost-benefit Analysis)<sup>5</sup>: Այս մեթոդն ԱՌ-Ն տնտեսական արդյունավետության գնահատման կիրառելի մեթոդներից մեկն է, այն գործիքներ է տրամադրում որոշումների ընդունման համար՝ համեմատելով իրավիճակի զարգացման սցենարներն ԱՌ-Ն պայմաններում և առանց այդ պայմանների (with-without համեմատություն): Այդ մեթոդի կիրառությունն ունի լայն տարածում և բարձր արդյունավետություն:

Միավորված ազգերի զարգացման ծրագրի հետազոտող Զ. Կելերը և ODI հետազոտական կենտրոնի հետազոտող Ա. Քարավանին իրենց «Աղետների ռիսկերի նվազեցման ֆինանսավորում» զեկույցում նշում են. «Վերջին 20 տարվա ընթացքում ԱՌ-Ն պետությունների համար եղել է շատ ցածր ուղենիշ: Միջազգային հանրությունն այդ ընթացքում 3 տրլն ԱՄՆ դոլար է ծախսել օգնության վրա, որից 106,7 մլրդ՝ բնական աղետների մասով, և այդ գումարից միայն 13,5 միլիարդն է ուղղվել աղետների ռիսկի նվազեցմանը»<sup>6</sup>: Ինչ խոսք, այս ցուցանիշները մտահոգիչ են և ուղղորդում են ԱՌԿ գործընթացում ներդրումների ճիշտ ռազմավարության մշակմանը: Այս հիմնախնդրի լուծման համար արդյունավետ մոդել է առաջարկում JICA (Ճապոնիայի միջազգային համագործակցության) գործակալությունը: «DR<sup>2</sup>AD» մոդելի միջոցով հնարավոր է դառնում գնահատել զարգացող երկրներում ԱՌԿ ազդեցությունը տնտեսական աճի և աղքատության կրճատման վրա: Այս մոդելի արդյունավետությունը հաստատվել է ՀՆԱ ցուցանիշների փոփոխման վերլուծությամբ. մի դեպքում՝ երբ առկա են ներդրումներ ԱՌԿ ուղղությամբ, մյուս դեպքում՝ երբ ներդրումները բացակայում են<sup>7</sup>: Կարծում ենք, որ այս մոդելի կիրառության գնահատումը մեր երկրի համար կարևոր է, քանի որ կան մեծաթիվ աղետների ռիսկեր, որոնք բնորոշ են նաև ՀՀ-ին:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ՄԱԿ-ի անդամ-պետություն, ևս միացել է ՄԱԿ-ի վերոհիշյալ երկու ծրագրերին, որոնց արդյունքում, ՀՀ Կառավարության 02.12.2010 թ. N1694-Ն որոշմամբ ստեղծվեց «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌ-ՆԱՊ) հիմնադրամը<sup>8</sup>: ԱՌ-ՆԱՊ-ի նպատակն է ՀՀ-ում աղետների ռիսկի նվազեցման բազ-

<sup>5</sup> St' u **Mechler R.**, Cost-benefit Analysis of Natural Disaster Risk Management in Developing Countries, <http://www.mekonginfo.org/assets/midocs/0003131-environment-cost-benefit-analysis-of-natural-disaster-risk-management-in-developing-countries-manual.pdf>:

<sup>6</sup> **Kellett J, Caravanii A.**, Financing Risk Reduction, GFDRR, <https://www.odi.org/sites/odi.org.uk/files/odi-assets/publications-opinion-files/8574.pdf>.

<sup>7</sup> St' u DR<sup>2</sup>AD Model (Ver1.4), JICA, <https://openjicareport.jica.go.jp/pdf/12252995.pdf>:

<sup>8</sup> St' u ՀՀ Կառավարության 02.12.2020 թ. «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ հիմնելու մասին» N1694-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=107222>:

մաճյուղ մեխանիզմի ձևավորումը՝ բոլոր դերակատարների ներգրավմամբ<sup>9</sup>: ՀՀ Կառավարության 07.03.2012 թ. N281-Ն որոշմամբ հաստատվեց ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարությունը: Ռազմավարության 2-րդ հոդվածում նշվում է. «Աղետների ռիսկերի նվազեցման համակարգը գործընթացների և գործառույթների մի շրջանակ է, որի նպատակն է բարձրացնել աղետներին դիմակայելու կարողությունները: Այն նպատակաուղղված է կանխելու կամ կանխարգելելու վտանգները, նվազեցնելու այդ վտանգների հնարավոր բացասական ազդեցությունը, ինչպես նաև նպաստելու հասարակության կայուն զարգացմանը»<sup>10</sup>:

Ոլորտի մասնագետները, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը, միջազգային մարդասիրական կազմակերպությունների հայաստանյան գրասենյակները մեծ ներդրում ունեցան այս ոլորտի գիտական մտքի զարգացման հարցում: Մասնավորապես, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) Ճգնաժամային կառավարման պետական սկադեմիան ստեղծեց աղետների ռիսկերի նվազեցման գիտական, ուսումնական և վերլուծական մեծ բազա: Հատկապես արժեքավոր ներդրում եղավ սկադեմիայի ռեկտոր, փ/ծ գեներալ-մայոր Հ. Շ. Մաթևոսյանի «Ճգնաժամային կառավարում» մենագրությունը, որի մի ամբողջ գլուխ նվիրված է աղետների ռիսկերի նվազեցման հարցերի բազմակողմանի վերլուծությանն ու բացահայտմանը<sup>11</sup>: Սկսած 2010 թվականից և մինչ օրս՝ ԱՌՆ ուղղությամբ աշխատանքներ է կատարում ԱՌՆԱՊ հիմնադրամը: Վերջինիս նախաձեռնությամբ ստեղծվել են ԱՌՆ ոլորտի վերաբերյալ ուսումնական ձեռնարկներ՝ նախատեսված բնակչության տարբեր խմբերի համար, ՀՀ 100-ից ավելի համայնքների համար կատարվել են ԱՌՆ գործընթացներ, մշակվել են Ստեփանավան և Դիլիջան քաղաքների դիմակայունության պլանները<sup>12</sup>: Մեր ուսումնասիրության շրջանակում օգտվել ենք ԱՌՆԱՊ-ի ԱՌՆ գործընթացների 20 համայնքների հաշվետվություններից:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հոդվածի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի կառավարման համակարգի ուսումնասիրությունն է և, դրա համատեքստում, ներկայիս տնտեսական իրավիճակի գնահատումը: Այդ նպատակով հոդվածում հիմնականում կիրառվել է համեմատական ուսումնասիրությունների մեթոդը՝ միջազգային փորձի և ՀՀ ներկա վիճակի միջև: Վերլուծվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տարերային, տեխնաձին և սոցիալ-կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակներին (ԱԻ) վերաբերող վերջին տարիների տվյալները, ՀՀ Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի կողմից «Տարածքային մակարդակում ռիսկերի կառավարման» մեթոդաբանությամբ ուսումնասիրված բնակավայրերի ԱՌՆ գործընթացները: Համեմատության և համադրման մեթոդով վերլուծվել են թվով 20 համայնքների տվյալներ և պատճառահետանքային կապով կատարվել են եզրակացու-

<sup>9</sup> Տե՛ս ԱՌՆԱՊ, [http://www.arnap.am/?page\\_id=2](http://www.arnap.am/?page_id=2):

<sup>10</sup> ՀՀ Կառավարության 07.03.2012 թ. «ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարությունը և ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N281-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74651>:

<sup>11</sup> Տե՛ս Հ.Շ. Մաթևոսյան, Ճգնաժամային կառավարում, մենագրություն, Եր., 2011:

<sup>12</sup> Տե՛ս ԱՌՆԱՊ հիմնադրամ, <http://www.arnap.am/>:

թյուններ: Աղետների ռիսկերի նվազեցման գործընթացների գնահատման համար օգտագործվել են հետևյալ ցուցանիշները՝ համայնքի ճանապարհների, կարևոր շենք-շինությունների վիճակը, հակակարկտային կայանների, խմելու և ոռոգման համակարգերի առկայությունը, կոյուղու, գազամատակարարման, աղբահանության վիճակը, համայնքային ֆինանսները, ԱՌՆ գիտելիքի մակարդակը, մթերման կետերի, ազդարարման համակարգի, խորքային հորերի, տրանսպորտի և գյուղտեխնիկայի առկայությունը: Նշված ցուցանիշների առկայությունը դիտարկվել է որպես համայնքի կարողություն, իսկ բացակայությունը՝ որպես համայնքի խոցելիություն: Դիտարկվել են համայնքներին բնորոշ վտանգները և վերլուծվել են դրանց հնարավոր տնտեսական հետևանքները: ՀՀ տարածքում գրանցված արտակարգ պատահարների շարժընթացը պարզելու համար կիրառվել են գրաֆիկական, հորիզոնական և ուղղահայաց, համեմատական վերլուծության մեթոդները: Բազմաբնույթ և բազմագործոն տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ ԱՌԿ մասով ՀՀ-ում գրեթե իսպառ բացակայում են աղետների տնտեսական ազդեցությունների վերաբերյալ տվյալները: Այդ իսկ պատճառով հողվածում կիրառվել են հիմնականում որակական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, համեմատական, տրամաբանական, պատճառահետևանքային կապերի վերլուծության մեթոդները:





**Վերլուծություն:** Աղետների ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացը բազմագործոն է, որի վերջնական նպատակը դրանց տնտեսական գնահատականը և չափելիության ապահովումն է:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ԱՌԿ տնտեսական գնահատման նպատակով օգտագործվում են տարբեր մեթոդներ: Այդ մեթոդների մեջ ընդհանուրն այն է, որ աղետների ազդեցությունները, որպես կանոն, բաժանվում են 3 խմբի՝ սոցիալական (նշվում է նաև որպես ֆիզիկական), տնտեսական և շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, իսկ անկախ հետևանքներից՝ ուղղակի կամ անուղղակի<sup>13</sup>:

*Սոցիալական ազդեցություն:* Այսպիսի ազդեցության ուղղակի հետևանքների առավել համապատասխան բնորոշումներ են *մարդկային կորուստներ, տուժածներ* և այլ ձևակերպումները: Անուղղակի հետևանք են համարվում սոցիալական ենթակառուցվածքի փլուզումը, վարակիչ հիվանդությունների տարածումը, ընկճախտը (դեպրեսիան) և այլն:


Նշենք, որ ՀՀ-ում ԱՌՆ գործընթացը սկսվել է դեռևս 2010 թվականից: Ուսումնասիրության համար 2016-2019 թթ. ընտրանքը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին ԱՌՆ ճգնաժամային կառավարման կենտրոնում գործում է տվյալների հավաքագրման, վերլուծման, մշակման, միասնական մշտադիտարկման համակարգ, ուստի, տվյալների ճշգրտությունն առավել բարձր է, տվյալներն ավելի համակարգված են, քան 2016 թ. նախորդող տարիներին:

<sup>13</sup> Տե՛ս **Mechler R.**, Reviewing Estimates of the Economic Efficiency of Disaster Risk Management: Opportunities and Limitations of Using Risk-Based Cost-Benefit Analysis, <https://link.springer.com/article/10.1007/s11069-016-2170-y>:



**Գծապատկեր 1. 2016-2019 թթ. ՀՀ-ում գրանցված ԱԻ-ները և դրանց սոցիալական հեղուկանքները (տուժածներ, զոհեր)<sup>14</sup>**

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, վերջին տարիներին ՀՀ-ում էական աճ է գրանցվել տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների գծով (ընդհանուր դեպքերի միջինը՝ 67%): Տուժածների և զոհերի թվով նույնպես «առաջատար» են տեխնաձին ԱԻ-ները՝ համապատասխանաբար 53% և 86%: Նշված ժամանակահատվածում կայուն աճի տեմպ է գրանցվել նաև սոցիալ-կենսաբանական ԱԻ գծով (թունավորում, համաճարակ):



**Գծապատկեր 2. 2016-2019 թթ. ՀՀ-ում գրանցված ԱԻ-ները (ընդամենը, տուժածներ, զոհեր)<sup>15</sup>**

ՀՀ-ում 2019 թ., 2016-ի համեմատ, ընդհանուր ԱԻ-ներն աճել են շուրջ 61%-ով, տուժածների և զոհերի քանակը համապատասխանաբար՝ 10%-ով և

<sup>14</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ, 2017-2020 թթ.:

<sup>15</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ, 2017-2020 թթ.:

18%-ով (գծապատկեր 2): Բերված տվյալները փաստում են, որ նշված ժամանակահատվածում ԱԻ-ների էական աճը, բարեբախտաբար, ուղեկցվել է տուժածների և զոհերի ոչ համարժեք աճով:

- Դրականն այն է, որ ՀՀ-ում սոցիալական ազդեցությունների վերաբերյալ առկա է պաշտոնական տվյալների բազա (թեկուզ միայն ուղղակի ազդեցության մասով):
- Բացասականն այն է, որ վերջին 4 տարիների ընթացքում նկատվում է արտակարգ դեպքերի, զոհերի, տուժածների թվի աճ, հատկապես՝ տեխնածին բնույթի արտակարգ դեպքերի մասով, այն դեպքում, երբ, սկսած 2010 թվականից, ՀՀ-ում իրականացվում են բազմաբնույթ ԱՌՆ գործընթացներ:

*Տնտեսական ազդեցություն:* Սովորաբար ներկայացվում է 3 ձևով՝ ուղղակի, անուղղակի, մակրոտնտեսական ազդեցություններ<sup>16</sup>: Աղետների տնտեսական ուղղակի ազդեցություն կարող են համարվել ակտիվների, պաշարների, ապրանքների կորուստը, ինչպես նաև ենթակառուցվածքների, արտադրամասերի, կազմակերպությունների ավերածությունները: Դրանք այն նյութական կորուստներն են, որոնք առաջանում են հենց աղետի ժամանակ և գնահատվում են անմիջապես, որպեսզի հաշվարկվեն վերականգնողական և ապահովագրական ծախսերը: Տնտեսական անուղղակի ազդեցություն կարող են համարվել արտադրության ծավալների և մատուցվող ծառայությունների կրճատումը, գործազրկության աճը, եկամուտների նվազումը և այլն: Աղետների մակրոտնտեսական ազդեցությունը ներառում է միասնական ազդեցության գնահատումը տնտեսական փոփոխականների վրա և ամենաբարդ հաշվարկվող ազդեցությունն է, քանի որ տնտեսության մեջ ամեն ինչ փոխկապակցված է: Այս ազդեցության գնահատման համար անհրաժեշտ է մոդելավորել բոլոր գործոնների պատճառահետևանքային կապերը:

ՀՀ-ում աղետների տնտեսական ազդեցությունների գնահատականը նկատելի է դարձնում, որ առկա են հիմնախնդիրներ, մասնավորապես՝ ՀՀ-ում աղետների տնտեսական ազդեցությունների վերաբերյալ համակարգված տվյալներ և վերլուծություններ չկան:

ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ ԱԻ նախարարության կողմից հրապարակված պաշտոնական տվյալների ուսումնասիրության արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- Դրականն այն է, որ որոշակի տվյալներ կան աղետների տնտեսական հետևանքների գնահատման վերաբերյալ (2018 թ. համար):
- Բացասականն այն է, որ այդ տվյալների արձանագրումը չունի համակարգված բնույթ (մասնավորապես՝ բացակայում է տվյալների բազան՝ ըստ տարիների), ինչի հետևանքով բարդանում է ԱՌՆ գործընթացը:

Չնայած նշված խնդրի առկայությանը՝ դիտարկել ենք ԱՌՆԱՊ հիմնադրամի կողմից ՀՀ 20 համայնքներում արդեն իրականացված աղետների ռիսկերի նվազեցման արդյունքները: Ուսումնասիրության նպատակը տվյալ համայնքներում առկա՝ տնտեսական զարգացման համար անհրաժեշտ են-

<sup>16</sup> Տե՛ս UN World Conference on DRR, Economic Aspects of DRR, <https://www.wcdrr.org/wcdrr-data/uploads/871/B.%20Brief%20issue%20paper.pdf>:



թակառուցվածքների, ռեսուրսների առկայության բացահայտումն է (օրինակ՝ կոյուղու, խմելու և ոռոգման ջրի առկայություն, ԱՌՆ գիտելիքներ, տեխնիկա, տրանսպորտ և այլն): Տվյալ դեպքում այդ ենթակառուցվածքները, ռեսուրսները հանդես են գալիս որպես համայնքի կարողություններ, իսկ դրանց բացակայությունը՝ որպես խոցելի կողմ: Հասկանալի է, որ այս կարողությունների բացակայությունը կարճաժամկետ կամ երկարաժամկետ հատվածում կարող է հանգեցնել արտակարգ իրավիճակների, աղետների և զուգահեռաբար ավելացնել համայնքի խոցելիությունը: Օրինակ, որևէ համայնքում կոյուղագծի բացակայությունը կարող է հանգեցնել բնահողի, ստորգետնյա ջրային ռեսուրսների աղտոտման, ապա նաև մարդկանց, կենդանիների, բույսերի շրջանում զանգվածային վարակիչ հիվանդությունների առաջացման: Այս դեպքում, առաջացած աղետի, արտակարգ իրավիճակի տնտեսական ազդեցություններն անխուսափելի կլինեն: Ի լրումն հարցի կարևորության նշենք, որ ՀՀ ԱՌՆ ռազմավարության 42-րդ հոդվածում նշվում է. «Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ծախսեր կատարելով՝ ֆինանսական և տնտեսական տեսանկյունից (աղետների) կանխարգելումը և կանխումը 7-10 անգամ ավելի արդյունավետ է, քան հետևանքների վերացումը»<sup>17</sup>:

Մեր կողմից ուսումնասիրվել են ՀՀ յուրաքանչյուր մարզից ԱՌՆ պլան ունեցող 2 համայնքների տվյալները (Երևանը չի ներառվել) (գծապատկեր 3):

Մեր կողմից արձանագրված դրական միտումներն են՝

- 20 համայնքներից 17-ը գազաֆիկացված է,
- 15 համայնքում առկա է խմելու ջրի ցանց,
- 16 համայնքից կատարվում է աղբահանություն,
- ամենաշատ կարողություններ ունեցող համայնքներն են Արենին, Ենոքավանը, Մրգաշենը և Լճափը:

Բացասական միտումներն են՝

- ամենաշատ վտանգները բնորոշ են Բջնի համայնքին՝ 12 վտանգ,
- 20 համայնքից միայն 4-ն ունեն կոյուղագիծ,
- չկա ոչ մի համայնք, որն ԱՌՆ համար ունենա բավարար ֆինանսական միջոցներ,
- բոլոր համայնքներում կա ԱՌՆ գիտելիքի պակաս,
- միայն 2 համայնքում կա ազդարարման համակարգ (Առափի, Շիրակ):


Ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում չկա որևէ համայնք, որն ունենա ԱՌԿ լիարժեք կարողություններ: Եվ չկա որևէ խոցելի կողմ, որը չի պահանջում ներդրումներ: Ի հավելումն նշենք, որ ԱՌՆԱՊ հիմնադրամի կողմից ՀՀ տարբեր բնակավայրերում իրականացված ԱՌՆ գործընթացների վերաբերյալ (արդյունքները տեղադրված են կայքէջում)<sup>19</sup> բոլոր հաշվետվություններում առկա են բազմաթիվ, բազմազործոն տվյալներ՝ տվյալ համայնքի վտանգների, խոցելիության, կարողությունների վերաբերյալ: Սակայն, որպես կանոն, բոլոր վերլուծությունները որակական են, և չկան աղետների ռիսկի քանակական վերլուծություններ, առաջարկվող մոդելներ: ԱՌՆ համայնքների

<sup>17</sup> ՀՀ Կառավարության 07.03.2012 թ. «ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարությունը և ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N281-Ն որոշում, հոդված 42, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74651>:

<sup>19</sup> [http://www.arnap.am/?page\\_id=4203](http://www.arnap.am/?page_id=4203)



գեկույցների «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում բոլոր համայնքների համար նշված են միևնույն խնդիրները: Ինչ վերաբերում է կլիմայի և աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված երկարաժամկետ նախագծերին, որոնք պետք է տեղ գտնեն համայնքի զարգացման պլաններում, ակնհայտ է՝ համայնքի ուժից վեր է նման նախագծերի իրականացումը: Դրանք պահանջում են ֆինանսական, մասնագիտական, այլ անհրաժեշտ ներդրումներ, սակայն համայնքը չունի նման կարողություններ: Որպես նման նախագծերի իրականացնողի՝ համայնքը նշել է ՀՀ Կառավարությանը:



Գծապատկեր 3. Համայնքների ԱՌՆ կարողությունները և բնորոշ վրանգները<sup>18</sup>

Ակնհայտ է դառնում, որ համայնքներում առկա ԱՌԿ խնդիրներն ուղղակի կամ անուղղակի ունեն տնտեսական ազդեցություն (ըստ գծապատկերի վերլուծության), օրինակ՝ Արայի համայնքի թույլ, խոցելի կողմերն են<sup>20</sup> ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը, գյուղատեխնիկայի անբավարարությունը, մանկապարտեզի բացակայությունը, կոյուղու բացակայությունը, խմելու ջրի ցանցի վատ վիճակը, ջրահավաք նոր ավազանի անհրաժեշտությունը, ռոտզման ցանցի անբավարարությունը, հակակարկտային միջոցների բացակայությունը, վաղ ազդարարման համակարգի բացակայությունը, խորքային հորերի անբավարարությունը և այլն: Բնականաբար, նշված թույլ կողմերն ավելացնում են համայնքի խոցելիությունը, և խոցելիության նվազեց-

<sup>18</sup> Կազմել է հեղինակը, աղբյուրը՝ [http://www.arnap.am/?page\\_id=4203](http://www.arnap.am/?page_id=4203):  
<sup>20</sup> Տե՛ս ԱՌՆ Արայի համայնք, [https://drive.google.com/file/d/1CWJcq3onR6\\_xo2ExDU8YCXsnkMOgU4B/view](https://drive.google.com/file/d/1CWJcq3onR6_xo2ExDU8YCXsnkMOgU4B/view):

ման գործընթացները ենթադրում են նպատակաուղղված ներդրումներ: Սակայն 2 դիտարկման շուրջ չկա քանակական վերլուծություն. նախ, եթե խնդիրները չվերացվեն, ապա վտանգի ծագման դեպքում ինչպիսի՞ն կլինեն տնտեսական հետևանքները (օրինակ, քանի՞ հա մշակահող կվնասվի, եթե հակակարկտային կայան չտեղադրվի կամ այլ միջոցառումներ չձեռնարկվեն), ինչպես նաև չկա հաշվարկ, եթե խոցելիությունը նվազեցվի, ապա ԱՌԿ տեսանկյունից այդ գործընթացը որքա՞ն ներդրում կպահանջի:


Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ աղետների ռիսկի կառավարման նպատակը ռիսկի նվազեցումն է<sup>21</sup>: Այն ընդգրկում է հետևյալ կարևոր բաղադրիչների՝ վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատումը: Այս երեք ենթահամակարգերի գնահատման մեջ պետք է ներառվեն նաև հստակ տնտեսական գնահատականներ: Օրինակ, հավանական վտանգի ծագման դեպքում որքա՞ն կլինեն տնտեսական կորուստները (քանի որ կան վտանգներ, որոնք հնարավոր չէ կանխել), որքա՞ն ներդրում կպահանջի վտանգի կանխումը (քանի որ կան վտանգներ, որոնք հնարավոր է կանխել) կամ որքա՞ն ներդրում կպահանջվի խոցելիության նվազեցման գործընթացների, կարողությունների ավելացման համար և այլն: ԱՌԿ ուղղությամբ կատարված ներդրումները 7-8 անգամ նվազեցնում են աղետների հետևանքները: Սակայն, դեռևս ամբողջ աշխարհում նկատվում է հակառակ պատկերը՝ երկրներն ավելի շատ ծախսում են հետևանքների վերացման, քան ԱՌԿ-ի վրա: Վերջին 2 տասնամյակի ընթացքում 107 մլրդ ԱՄՆ դոլար է ծախսվել բնական աղետների վրա, որից 87%-ը հետևանքների վերացման՝ վերականգնման ծախսերն են, և միայն 13%-ն է ուղղված եղել խոցելիության նվազեցմանը և հետևանքների մեղմացմանը<sup>22</sup>: Իսկ թույլ զարգացած երկրներում առհասարակ ԱՌԿ ուղղությամբ ներդրումներ չեն կատարվում, և աղետների հետևանքները լինում են ծանր:

Հայաստանում ԱՌԿ գործընթացում տնտեսական ազդեցությունները գնահատելու (այդ թվում՝ ուղղակի, անուղղակի և մակրոտնտեսական ազդեցությունները), ինչպես նաև աղետների ռիսկերի արդյունավետ կառավարում իրականացնելու նպատակով առաջարկում ենք ուսումնասիրել, տեղայնացնել և համապատասխանության դեպքում կիրառել տնտեսական վերլուծության մեթոդներ և մոդելներ, որոնք ժամանակի ընթացքում ապացուցել են իրենց արժեքավոր լինելը:

Տնտեսական գնահատման ինչպիսի մեթոդ էլ որ կիրառվի, կան տնտեսական վերլուծության քայլեր, որոնք կիրառվում են ԱՌԿ տնտեսական գնահատման համար:

<sup>21</sup> Տե՛ս Հ.Շ. Մաթևոսյան, Ճգնաժամային կառավարում, մենագրություն, Եր., 2011, էջ 179:

<sup>22</sup> Տե՛ս Kellett J., Caravanii A., Financing Risk Reduction, GFDRR, <https://www.odi.org/sites/odi.org.uk/files/odi-assets/publications-opinion-files/8574.pdf>, էջ 14:




Գծապատկեր 4. **ԱՌԿ տնտեսական գնահատման քայլերը**<sup>24</sup>

Ըստ գծապատկեր 4-ում ներկայացված քայլերի՝ ԱՌՆ տնտեսական ազդեցության որոշման 3-րդ քայլը վերաբերում է DRM Economic CBA (Cost -

<sup>24</sup> Տե՛ս **Benson Ch., Twigg J.**, Tools for Mainstreaming Disaster Risk Reduction, [https://www.preventionweb.net/files/1066\\_toolsformainstreamingDRR.pdf](https://www.preventionweb.net/files/1066_toolsformainstreamingDRR.pdf), էջ 94:

Benefit Analysis) ԱՌՆ ծախսեր-օգուտներ վերլուծությանը: Մեթոդի study case-երը ներկայացված են Ռ. Մեչլերի հետազոտությամբ<sup>23</sup>: Այս մեթոդը լայն կիրառություն է ստացել, և շատ պետություններ ներառել են այն իրենց ԱՌԿ գործընթացներում: CBA մեթոդի գործածումը թույլ է տալիս սահմանափակ ռեսուրսների պայմաններում ընտրել ԱՌՆ արդյունավետ լուծումներ: Ծախս-օգուտ մեթոդը օգտակար է առավելապես շահավետ նախագծերի ընտրության համար, կորուստների նվազեցման, կանխման և շեղումների բացահայտման տեսանկյունից:

Լայն կիրառություն ունի նաև DR<sup>2</sup>AD մոդելը՝ մշակված JICA-ի (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության) կողմից<sup>25</sup>: Մոդելն ունակ է գնահատելու զարգացող երկրներում ԱՌԿ ազդեցությունը տնտեսական աճի և աղքատության կրճատման վրա: Այս մոդելի արդյունավետությունը հաստատվել է ՀՆԱ-ի ցուցանիշների փոփոխման վերլուծությամբ. մի դեպքում՝ երբ առկա են ներդրումներ ԱՌԿ ուղղությամբ, մյուս դեպքում՝ երբ ներդրումները բացակայում են: Գրաֆիկորեն այն ներկայացված է գծապատկեր 5-ում<sup>26</sup>.



Գծապատկեր 5. ԱՌՆ ներդրման և տնտեսական զարգացման մոդելը

Այս և շատ այլ մոդելներ, աղետների ռիսկերի նվազեցման մեթոդներ, արդարացրել են սպասելիքները՝ ժամանակի ընթացքում էապես ազդելով աղետների տնտեսական գնահատման զարգացման և կորուստների նվազեցման վրա, սակայն զարգացող երկրներում դեռևս առկա է «հետևանքներ վերացնելու» պրակտիկան՝ սուղ ֆինանսական միջոցների, ինչպես նաև ռիսկի հետ կապված անորոշություններով պայմանավորված: Դիտարկելով այդ նպատակով աշխարհում կիրառվող հայտնի մեթոդները և արդյունքները՝

<sup>23</sup> Տե՛ս **Mechler R.**, Cost-benefit Analysis of Natural Disaster Risk Management in Developing Countries, Manual, 2005:  
<sup>25</sup> Տե՛ս DR<sup>2</sup>AD Model (Ver1.4), JICA , <https://openjicareport.jica.go.jp/pdf/12252995.pdf>:  
<sup>26</sup> Տե՛ս UNISDR, Economic Aspects of DRR, Background Document for Working Session, 2015, էջ 22:

բազում սթադի-քեյսերի միջոցով<sup>27</sup> կարող ենք փաստել, որ ՀՀ-ում ևս կարիք կա դրանք ինտեգրելու, տեղայնացնելու և կիրառելու:

**Եզրակացություններ:** Ամփոփելով Հայաստանի Հանրապետության ԱՌԿ տնտեսական տեսլականի կենսագործման առաջնահերթությունները՝ հանգում ենք հետևյալին.

- Առհասարակ, աղետների նվազեցումը պետական մասշտաբով արդեն իսկ ներդրում է համարվում: ՀՀ-ում մեծ առաջխաղացում է նկատվում ԱՌԿ ոլորտում, առկա է պետական աջակցություն, բազմակողմանի համագործակցություն, կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության պատրաստականություն ԱՌՆ հարցում:
- ՀՀ-ում գրանցվող արտակարգ դեպքերի, իրավիճակների, աղետների տվյալների համատեքստում պետք է հաշվարկվեն նաև ուղղակի տնտեսական հետևանքները՝ հետագա վերլուծությունների, տնտեսական գնահատման և համապատասխան ներդրումների մոդելների մշակման կամ տեղայնացման նպատակով:
- ԱՌԿ տեղեկատվական բազաների ամբողջականության, արդյունավետ պլանավորման, մոդելավորման, կառավարման համար անհրաժեշտ է նաև իրականացնել տնտեսական վերլուծություն, ապա նաև գնահատում և ստացած արդյունքները ներառել ԱՌԿ ռազմավարության մեջ:
- ԱՌԿ տնտեսական գնահատումը պետք է իրականացվի պետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակներում, կազմակերպություններում (անկախ կազմակերպատիրական ձևից), որպեսզի տվյալների ամփոփման և ընդհանրացման հիման վրա մոդելավորվի ամբողջ երկրի ԱՌԿ տնտեսական գնահատման համակարգը:
- Ռիսկի որակական գնահատումից քայլ անել դեպի քանակական գնահատում: Ինչ խոսք, տարբեր ռիսկերի մասով կան նաև հստակ քանակական գնահատականներ, սակայն, որպես կանոն, դրանք վերաբերում են ֆիզիկական կորուստների հնարավոր հետևանքներին և չեն արտացոլում խնդիրների տնտեսական գնահատականները: Օրինակ, առկա մոդելավորման համակարգերի միջոցով շատ դյուրին է սողանքի վտանգի դեպքում հստակորեն քարտեզագրել հնարավոր սողանքի վայրը, հնարավոր մարդկային և կապիտալ կորուստները և այլ ֆիզիկական հետևանքները, բայց կիրառվող ոչ մի մոդել չի կատարում տնտեսական գնահատում: Դա, իր հերթին, անհնարին է դարձնում հեռանկարում ԱՌԿ տնտեսական արդյունավետության գնահատումը ՀՀ-ի համար:

ԱՌՆ ցանկացած ծրագրում, նախագծում պետք է այսուհետ ներառել նաև տնտեսական վերլուծություն, քանի որ, վտանգների, խոցելիության և կարողությունների համակարգերը դիտարկելիս, ընտրվում են իրականացվելիք այն միջոցառումները, որոնք ունեն տնտեսական բովանդակություն:

<sup>27</sup> Տե՛ս Kellett J., Caravanii A., Financing Risk Reduction, GFDRR, <https://www.odi.org/sites/odi.org.uk/files/odi-assets/publications-opinion-files/8574.pdf>:

Օրինակ, սեյսմիկ ռիսկի գնահատման արդյունքում որոշվել է՝ կատարել սեյսմակայուն շինարարություն, ամրացնել արդեն առկա կառույցները, կամուրջները, կազմել միկրոշրջանցման քարտեզներ, ուսուցանել բնակչությանը և այլն: Նշված բոլոր միջոցառումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են տնտեսական համակարգին, այդ ուղղությամբ պլանավորվող ներդրումներին, հետևաբար պետք է պարունակեն նաև հստակ ֆինանսատնտեսական հաշվարկներ:

### Օգտագործված գրականություն

1. Մաթևոսյան Հ. Շ., Ճգնաժամային կառավարում, մենագրություն, հեղ. հրատարակչություն, Եր., 2011:
2. ԱՌՆԱՊ, ՏՄՌԿ մեթոդաբանությամբ ուսումնասիրված բնակավայրեր: [http://www.arnap.am/?page\\_id=4203](http://www.arnap.am/?page_id=4203):
3. ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի «ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարությունը և ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N281-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74651>
4. ՀՀ Կառավարության 2010 թ. դեկտեմբերի 2-ի «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ հիմնադրամ հիմնելու մասին» N1694-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=107222>
5. ՀՀ վիճակագրական կոմիտե, Սոցիալ-տնտեսական վիճակը, արտակարգ դեպքեր 2019 թ., [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_19a\\_5100.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_19a_5100.pdf):
6. ՀՀ վիճակագրական կոմիտե, Սոցիալ-տնտեսական վիճակը, արտակարգ դեպքեր 2018 թ., [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_18a\\_5110.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_18a_5110.pdf):
7. ՀՀ վիճակագրական կոմիտե, Սոցիալ-տնտեսական վիճակը, արտակարգ իրավիճակներ 2017 թ., [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_17a\\_5110.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_17a_5110.pdf):
8. ՀՀ վիճակագրական կոմիտե, Սոցիալ-տնտեսական վիճակը, արտակարգ իրավիճակներ 2016 թ., [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_16a\\_5110.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_16a_5110.pdf):
9. Benson Ch., Twigg J., Tools for Mainstreaming Disaster Risk Reduction. [https://www.preventionweb.net/files/1066\\_toolsformainstreamingDRR.pdf](https://www.preventionweb.net/files/1066_toolsformainstreamingDRR.pdf).
10. DR<sup>2</sup>AD Model (Ver1.4), JICA. <https://openjicareport.jica.go.jp/pdf/12252995.pdf>.
11. Hyogo Framework for Action 2005-2015. [https://www.unisdr.org/files/1037\\_hyogoframeworkforactionenglish.pdf](https://www.unisdr.org/files/1037_hyogoframeworkforactionenglish.pdf).
12. Kellett J., Caravanii A., Financing Risk Reduction, GFDRR. <https://www.odi.org/sites/odi.org.uk/files/odi-assets/publications-opinion-files/8574.pdf>.
13. Mechler R., Cost-benefit Analysis of Natural Disaster Risk Management in Developing Countries,

- <http://www.mekonginfo.org/assets/midocs/0003131-environment-cost-benefit-analysis-of-natural-disaster-risk-management-in-developing-countries-manual.pdf>.
14. Mechler R., Reviewing estimates of the economic efficiency of disaster risk management: opportunities and limitations of using risk-based cost-benefit analysis.  
<https://link.springer.com/article/10.1007/s11069-016-2170-y>.
  15. Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030.  
[https://www.preventionweb.net/files/43291\\_sendaiframeworkfordrrn.pdf](https://www.preventionweb.net/files/43291_sendaiframeworkfordrrn.pdf).
  16. UNISDR, Economic losses, poverty and disasters 1998-2017,  
[https://www.unisdr.org/2016/iddr/IDDR2018\\_Economic%20Losses.pdf](https://www.unisdr.org/2016/iddr/IDDR2018_Economic%20Losses.pdf).
  17. UN World conference on DRR, Economic aspects of DRR.  
<https://www.wcdrr.org/wcdrr-data/uploads/871/B.%20Brief%20issue%20paper.pdf>.

## АНИ ТЕРТЕРЯН

*Преподаватель кафедры физического воспитания по чрезвычайным ситуациям и гражданской обороны АГЭУ, аспирант кафедры менеджмента АГЭУ*

***Роль управления рисками бедствий в контексте экономического развития Республики Армения.*** – Идея управления рисками бедствий, цель которой направлена на снижение риска бедствий, объединила международное сообщество. Серьезность экономических последствий бедствий в разных странах стала сигналом для экономической оценки рисков бедствий, и это считается одним из ключевых направлений по управлению рисками бедствий. Во многих странах идея экономического развития основывалась на стратегии управления рисками бедствий. Однако вызывает беспокойство тот факт, что в случае стихийных бедствий на оказание помощи расходуется гораздо больше финансовых средств, чем на снижение риска бедствий.

В Армении внедряются многогранные, разнообразные процессы снижения риска бедствий. Кажется, что в 21 веке, когда существует огромная информационная система, не может возникнуть никаких проблем в процессе получения необходимых данных. Однако в рамках изучения сферы мы столкнулись с проблемой отсутствия официальных данных об экономических последствиях катастроф, чрезвычайных ситуаций, событий в Республике Армения. С одной стороны, ситуация вызывает беспокойство, с другой стороны, это исследование – хорошая возможность зафиксировать пробел и предложить новые решения.



**Ключевые слова:** *управление рисками бедствий, снижение риска бедствий, экономическое воздействие, опасность, уязвимость, возможности.*

JEL: Q54, D81

## **ANI TERTERYAN**

*Lecturer at the Chair of Physical Training, Emergencies and Civil Defence at ASUE,*

*PhD Student at the Chair of Management at ASUE*

### ***Role of Disaster Risk Management in the Context of Economic Development of the Republic of Armenia.–***

Disaster risk management (DRM), the aim of which is disaster risk reduction (DRR), has brought together the international community. The severity of the economic impact of disasters in different countries has served as a signal for economic disaster risk assessment and this is considered to be one of the key areas of disaster risk management. In many countries, the idea of economic development was based on a disaster risk management strategy. However, it is worrying that much more funding is being spent on disaster relief than on reducing the risk of disasters.

There are various disaster risk reduction processes in Armenia. It seems that in the 21st century, when there is a huge information system, there can be no problems in the process of obtaining the necessary data. However, as part of the study of the sphere, we were faced with the problem of the lack of official data on the economic consequences of disasters, emergencies, and events in the Republic of Armenia. On the one hand, the situation is worrying, on the other hand, this study is a good opportunity to fill a gap and propose new solutions.

**Key words:** *disaster risk management, disaster risk reduction, economic impact, danger, vulnerability, opportunity.*

JEL: Q54, D81